Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը:
Տարեկան գինն է 10 ռուբլի. կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.:
Առանձին համարը 7 կոպէկ:
Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենտրոնական գրավաճառանոցում»:
Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ".
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամեն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ԱՐՁԱԳԱՆՔ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդամիրովի) և «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»:
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 Ռ. ԿԷՍ ՏԱՐՈՒԱՆԸ 6 Ռ.
Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ", իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien „Ardzagang".
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով:

1896-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆ
Այն անձինք և հաստատութիւնները, որոնք ԱՅԺՄԵՆ ԻՍԿ կը ստորագրուին 1896 թուի „Արձագանք"-ին, կը ստանան համարները բաժանորդ գրուելու օրից՝ վճարելով ընդամենը տասը ռուբլի:

ՊԱՀԵՍՏ Գ. ԱԴԻԼԽԱՆԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ.
Գործարանների արդիւնաբերութեանց
Միքէլ-փողոցի և Երևանեան հրապ. անկիւն, նախկին գեներալ Տէր Ղուկասովի տանը:
Առաջիկայ ձմեռուայ համար պահեստում, ի միջի այլոց, կան՝ եւրոպացու կտորից պատրաստած—կանանց համար ծածկոցներ (ротонды)՝ զանազան գոյների, և զինուորականների ու տղամարդոց համար վերարկուներ նոյն կտորից, ևս և թաղիքից տաք ոտնամաններ և զանազան գների [illegible] (լեզգու ոճով) իր բաշլղներով:
Բոլորն էլ ծախվում են գործարանի գներով: (10—10)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ
Անգլիայի քաղաքականութիւնը:
Սուլթանի նոր նամակը:
Դրուզների շարժումը:
Հայկական խնդիրը Ամերիկայում:
Դրութեան պատասխանատուութիւնը:
Արդեօք մի ներշնչուած յօդուած:
Սասունի կարօտեալները:
Ամենապատիւ Պատրիարքը:
Սպառազինութիւն.—Նոր հաթթի:
Սպառնալիք:
Մի լաւատես կարծիք:
Զէյթունի ապստամբութիւնը:
Փարիզի Թիւրքաց կոմիտէը:
Սահմանադրութեան անհրաժեշտութիւնը Թիւրքիայում:
Ալաշկերտ:
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Գ. կառավարչապետի մնալը Պետերբուրգում: Գ.Մ. Հակկէլի վերադարձը: Այգեգործական ընկերութիւն: Գինեգործութեան ուսուցչական դասընթացներ: Ռէօղէր քայերի նուագահանդէսը: Կալուածական չնորհումներ: Բարեգործ: Հայկական ներկայացումը: «Մարդ-Առիւծ» գրքոյկը: Սանտինները կարճ կը լինին: Մի ճարպիկ գողութիւն: Զուլալ: Վիկտոր Հիւգոյի ռուս. ժող. VIII հատորը: Քշերից մէկը:
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ.—Մուշից:
ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ
ՖԵԼԻԵՏՕՆ.—Մի պատոյս:
ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—Նամակ խմբագրութեան:
ՔԱՂԱՔԱՅԻՆ.—Թուրքական եկամուտքը:
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ԱՆԳԼԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Սուվորինի մի յօդուածի առթիւ ռուսաց մամուլի մի քանի օրգանները այն միտքը յայտնեցին, թէ Անգլիան ցանկանում է Հայաստանին ինքնավարութիւն տալ և այդպիսով մի միջնորդ ստեղծել Ռուսիայի և Թիւրքիայի միջև ու առաջինի համար փակել ամեն ճանապարհ դէպի հարաւային ծովերը:

«Նովոյէ Վրեմիայի» յօդուածագիրներից մէկը «Անգլիայի ժամանակակից քաղաքականութեան բանալին» յօդուածով ուզում է այդ ենթադրութեան ստուգութիւնն ապացուցանել:

Մեծ Բրիտանիայի արտաքին գործոց նախարար միստր Կերզոնը իր մի քանի աշխատութիւններում տարիներ առաջ բացատրել է այն նպատակները, որոնց ձգտում է անգլիական քաղաքականութիւնը Ասիայում:

Այդ աշխատութիւններում Կերզոնը այն կարծիքն է յայտնում, թէ Բրիտանիան ամեն ջանք պիտի գործ դնէ՝ զօրաւոր հարևաններից իրեն հեռու պահելու: Իսկ դրա համար անհրաժեշտ է մէջտեղի տարածութիւնների վրայ անկախ պետութիւններ հաստատել, ուր չկան, և պաշտպանել, ուր արդէն գոյութիւն ունին:

Ոչ մի անգլիական կառավարութիւն, ասում է Կերզոնը, չի կարող և չպէտք է Ռուսիային թոյլ տալ համարել ճանապարհ ունենալ դէպի հարաւային ջրերը և որ և է նաւահանգիստ այդ ջրերի վրայ: Իսկ Ռուսաստանն այդպիսի ձգտում ունի, որ արդիւնքի համար հարկաւոր է մէջտեղ նրա ճանապարհի վրայ անկախ պետութիւնների գոյութիւնը պահպանել, որպէս բուֆէրների, որոնք երկու մարմինները կը պաշտպանեն ընդհարումից:

«Նով. Վրեմիան» գտնում է, որ Անգլիան Թիւրքաց Հայաստանի վերաբերմամբ ևս նոյն քաղաքականութեան է հետևում, այսինքն ուզում է Հայաստանից ստեղծել մի անկախ պետութիւն, որ իբր պարիսպ արգելէ Ռուսիայի ընթացքը դէպի Պարսից ծոցը:

ՍՈՒԼԹԱՆԻ ՆՈՐ ՆԱՄԱԿԸ

Լոնդոնի „Central News" գործակալութիւնը հաղորդում է, թէ սուլթանը մի նամակ է ուղարկել Պետերբուրգ, որով իւր շնորհակալութիւնն է յայտնում Ռուսիային՝ վերջինիս անշահասիրական ձգտումների առթիւ, և ջերմագին խնդրում է աջակցել իրեն ներկայ ծանր տագնապի ժամանակ:

ԴՐՈՒԶՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ

Բէյրութից «Daily-News»-ի թղթակիցը նոյ. 17-ին գրած մի ընդարձակ և խիստ շահեկան մանրամասնութիւններով լի նամակով նկարագրում է ամբողջ Սուրիայի վերին սահմանի կրիտիկական և վտանգաւոր դրութիւնը:

Թղթակիցը յայտնում է, թէ Եաֆայի և Ս. Երուսաղէմի շրջակայքում 60,000 նոր զինուոր է զէնքի կոչուած, և դրանցից 8000-ը գտնւում է Բէյրութում: Ս. Երուսաղէմը լցուած է նոր զօրքերով, որոնք շուկաներում շրջում են և ամեն պէտքեր առնում են առանց վճարելու: Զօրքերը խումբ-խումբ քաղաքներից դուրս շրջականերն են գնում բան ճարելու համար: Առ հասարակ նոր զինուորները զուրկ են ամեն անհրաժեշտ պիտոյքներից, մինչև իսկ կօշիկներ չունին:

Եւրոպական ժողովուրդը, ասում է թղթակիցը, շատ քիչ է տեղեկանում դրուզների դէմ թուրքերի մղած պատերազմի մասին, որ աշխատում են՝ որքան հնար է, գաղտնի պահել: Ապստամբ դրուզները, որոնց թիւը 60000-ի է հասնում, Հօրանում մի քանի սպաներ են սպանել. պատեհից մի բանակ պիտի ուղարկեն նրանց դէմ:

Դրուզները Սուրիական և Արաբական ծագում ունին. դրանք բուն մահմեդականներից շատ են տարբերվում և մի հաքիմ-խալիֆի են հպատակվում կրօնապէս:

Բէյրութում և Եաֆայում խմբուած զինուորների համար թուրքերն ասում են, թէ այդ կարգադրութիւնը եղել է, որպէս զի արգելեն եւրոպացոց օժանդակութիւն հասցնել հայերին Անատոլիա:

Իսկ այստեղ գտնուող բոլոր անգլիացիների մտքերում երկու բացատրութիւն է ծագել: Առաջինը այն՝ թէ ներքին գաւառներում մի ընդհանուր յեղափոխութիւն պիտի լինի, ճիշտ այնպէս, ինչպէս եղել է Փոք. Ասիայում: Իսկ երկրորդը այն, թէ և առաւել ճիշտ է երևում, որ սուլթանը ուզենալով իր կայսրութեան մէջ մի ընդհանուր խառնակութիւն, ազդանշան ապտեղների դէմ և գաւառները կառավարութեան դէմ, սուրբ պատերազմ է հռչակել տալիս, գիտենալով, որ բոլոր մուսուլմանները կը թողնեն իրենց փոխադարձ հակառակութիւնները և կը հաւաքուին մարգարէին կանաչ դրօշակի տակ բոլոր քրիստոնեաներին վանելու համար իրենց երկրից: Բոլոր մզկիթներում այժմ քարոզում է, թէ քրիստոնեայք անիծեալ են:

Բէյրութը զրկուած է Եւրոպայի հետ փոստային կամ հեռագրական յարաբերութիւններից: Ոչ մի լրագիր չէ թոյլատրուած, որով բոլորովին անտեղեակ ենք թէ ինչ կայ Եւրոպայում:

Թղթակիցը վերջացնում է իր նամակը աւելացնելով, թէ բոլոր այդ բաները ցոյց են տալիս, որ զինուորները հաւաքուած են այստեղ ոչ թէ դրուզների դէմ պատերազմելու, այլ ուրիշ նպատակով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Վաշինգթօն 23 նոյեմբերի.

Նախագահ Կլիվլէնդը կօնգրէսին ուղղած գրութեան մէջ յայտնեց. «Եւրոպական մի քանի առաջնակարգ պետութիւններ թէ իրենց կողմից և թէ ինչպէս քրիստոնեայ աշխարհի հաւատարմատարներ՝ պաշտպանողների զօրութեամբ խրատներ ունին հարկադրել Թիւրքիային, որ վերջ դնի մոլեռանդութեան բարբարոս բռնութիւններին և կոպիտ դէպքերում միջոցներ ձեռք առնի քրիստոնեաներին այդ բռնութիւններից պաշտպանելու: Պետութիւնները յայտնել են, թէ այդ խրատներն ու պարտաւորութիւնները բացատրելու իրենց են պատկանում: Պէտք է յուսալ, որ նրանք անյապաղ իրական միջոցներ ձեռք կառնեն:»

ԱՐԴԵ՞ՕՔ ՄԻ ՆԵՐՇՆՉՈՒԱԾ ՅՕԴՈՒԱԾ

(„Standard", նոյեմբ. 22)

«Անգլիայում ամենքն ապրում և գործում են հասարակական կարծիքի կենտրոնի ներքոյ, և եթէ լորդ Սօլզբերին անձնապէս ցանկութիւն էլ ունենար լորդ Ռօզբերիի՝ իրան ժառանգութիւն թողած հերթական խնդիրը բարձի թողի անել, նրան թոյլ չէին տալ այդ անելու իւր հայրենակիցները: Նոքա կը պնդէին և կը ստիպէին նրան, որ Անգլիան պետութեանց այն պահանջների նկատմամբ, որոնք վերաբերում են Հայաստանում գործուող բռնութեանց, ստանձնէր պաշտօնական, գուցէ և գործնական ղեկավարութիւն:

«Անգլիական նախարարապետին վիճակուել է երկու տեսակ պատասխանատուութիւն, և երկու՝ միմեանց հակառակ տարրերի հաշտեցնելը շատ և շատ ծանր գործ է: Մի կողմից նա պէտք է Օսմանեան կայսրութեան խախտման առաջն առնէ, միւս կողմից նա պէտք է այնպիսի սպառնալից եղանակով գործէ Տաճկաստանի դէմ, որ բաւարարութիւն տուած լինի անգլիական ազգի պահանջներին. նա ստիպուած է միևնոյն ժամանակ և՛ քաղաքագէտի պարտքը կատարել և՛ մարդասէրի:

«Միւս պետութեանց ոչ մի նախարարի այդպիսի պարտականութիւն վիճակուած չէ:

«Պէտք է գործել ոչ ի պաշտպանութիւն և ոչ էլ հակառակ Օսմանեան պետութեան: Պէտք է նրան, եթէ հնար է, պահպանել, բայց բարեփոխել: Իսկ եթէ նորա բարեփոխումն անկարելի կը համարուի, այդ դէպքում պէտք է նրան անկարող և մեռեալ հրատարակել և կարգել խնամակալական վարչութիւն՝ բոլոր պետութիւններից բաղկացած: Եթէ սուլթանը՝ ի շնորհս նաւատորմիղների ցոյցի Մարմարա ծովում, կը պահպանէ իւր իշխանութիւնը, այդպիսի դէպքում վարչութեան հիմունքները նորա երկրներում պէտք է կարգաւորուին այն սկզբունքների համաձայն, որոնք բաւարարութիւն կը տան նորա պաշտպանողներին: Տաճկական կայսրութիւնը չէ կարող կառավարուել գաղտնիքների օգնութեամբ. նա պէտք է գործէ օրը ցերեկով, ինչպէս միւս պետութիւնները»:

ՍԱՍՈՒՆԻ ԿԱՐՕՏԵԱԼՆԵՐԸ

Մուշի բրիտանական փոխ-հիւպատոսը հաղորդում է, թէ մնացած սասունցիներին օժանդակելու գործը յաջողութեամբ առաջ է գնում: Վրայ հասնող ցրտերը սաստիկ նեղութիւններ են պատճառում նրանց, որոնք տուն չունին: Փոխ-հիւպատոսը կարծում է, թէ Անգլիայից իւր ստացած 10,000 ֆ. ստեռլինգը բաւական են Սասունի Տալւորիկի կարօտեալներին խնամելու համար:

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐՔԸ

Հեռ. «Ռուս. գործ».
Կ. Պոլիս 18 նոյեմբ.

Հայոց Պատրիարքը հաղորդեց Դրանին այն կարծիքի մասին, որ տիրում է Փոքր-Ասիայում և որ սով է սպառնում: Պատրիարքարանը նոյնը հաղորդեց և դեսպաններին:

ՍՊԱՌԻԶԻՆՈՒԹԻՒՆ.—ՆՈՐ ՀԱԹԹԻ

Կ. Պոլսից նոյեմբերի 20-ին „Cor. Bureau"-ն հեռագրում է.

Զէնքի կոչուած ռեդիֆի 128 բատալիօններից 110 արդէն սպառազինուած են և ուր հարկն է տարուած. մնացեալներից անկարելի է օգտուել, որովհետև զինուած չեն: «Զերեֆիեհոն» պետական նաւը որ գնացել էր Տրապիզոն պատերազմի մթերքներով, յայտնի չէ թէ ուր է գտնվում:

Ելդըզ-Կէօշկում ամենայն օր տեղի ունին նախարարների խորհուրդ: Ասում են թէ սուլթանի մի նոր հաթթի է մշակվում, որ իր մէջը շատ այնպիսի զիջումներ է բովանդակում, որոնցից սպասում են ներքին և արտաքին դրութեան բարւոքում:

ԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ

Անգլիական ազատամիտ կուսակցութեան յայտնի անդամ Լաբուշէրն ամեն անգամ, երբ հայկական խնդիրը հանդէս է գալիս, սպարէզ է իջնում մի լակոնական առաջարկութեամբ, թէ պէտք է ռուսներին թոյլ տալ, որ Թիւրքաց Հայաստանը գրաւեն: Այժմ „Thrut" լրագրում մի յօդուած է զետեղել, ուր ի միջի այլոց, ասում է. «Փոքր-Ասիայում կատարուած կոտորածների գլխաւոր պատասխանատուութիւնը մեզ վրայ է ընկնում, որովհետև մենք միշտ մեր պարտքն ենք համարել օսմանեան պետութեան ամբողջութիւնը պահպանել: Մեր ցանկութիւնն է եղել միշտ ռուսներին դէպի Միջերկրական ծովը և Պարսից ծոցը չթողնել: Եւ մեր այդ ցանկութեանը [սխալմտաբար] զոհ ենք բերել Թիւրքիայի քրիստոնեաներին: Այդ նպատակին ձգտելով, մենք ամեն կերպ աշխատել ենք Միջերկրական ծովը բրիտանական լիճ դարձնել: Միևնոյն նկատումներով մենք գրաւեցինք Եգիպտոսը: Դրա հետևանքն այն եղաւ, որ Ռուսիան և Ֆրանսիան իրենց ուժերը միացրին, որպէս զի թոյլ չտան մեզ Միջերկրական ծովում գլխաւոր դեր խաղալու: Ճշմարիտ է, Իտալիան մեր կողմն է, բայց եւրոպական չփոթութիւնների ժամանակ նա՝ որպէս պատերազմական փակտոր՝ մեծ նշանակութիւն չունի: Գերմանիան աւելի Ռուսիայի կողմն է հակում, իսկ Աւստրո-Հունգարիային միշտ կարելի է հեշտութեամբ կաշառել, թոյլ տալով, որ Սալոնիկը գրաւի»:

ՍՊԱՌՆԱԼԻՔ

Կէօլն 23 նոյեմբերի.

„Kölnische Zeitung" լրագրին Լոնդոնից հեռագրում են. «Կ. Պոլսի բրիտանական դեսպանին հրամանագրուած է սուլթանին յայտնել, որ երկրորդ պահականաւերի վերաբերմամբ երեք օրուայ միջոցում վերջնական վճիռ պէտք է կայանայ, ապա թէ ոչ պետութիւններն ստիպուած կլինեն իրենց գործունէութեան եղանակը փոխել»:

ՄԻ ԼԱՒԱՏԵՍ ԿԱՐԾԻՔ

Վիեննայի ֆրանսիական դեսպան պ. Լօզէն խօսելով մի մանուկ պատգամաւորի հետ, արևելքի խռովի վիճակի մասին շատ լաւատես կարծիք է յայտնել: Նորա ասելով բոլոր պետութիւնները միահոգի են իրենց ցանկութեանց մէջ Տաճկաստանում բորբոքուած խառնակը հանգցնելու վերաբերութեամբ, ոչ մէկը չի հրաժարուել համաձայնութիւնից: «Այսպիսի պայմաններում եւրոպական ընդհարման հնարաւորութիւնն ինքն ըստ ինքեան չքվում է: Վիեննայի արտաքին գործոց նախարարի և այլ պետութեանց մէջ հեռագիրների եռանդուն փոխանակութիւն է լինում, այս էլ նոյնպէս կը նպաստէ բաւական շուտով իրերի վիճակը պարզելուն»:

ԶԷՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Զէյթունին վերաբերեալ վերջին լուրերը, գրում է «Նով. Աբազրենիէ» լրագրի թղթակիցը, հետևեալներն են.

Զէյթունցի հայերի հետ միացել են քրիստոնեայ արաբները, սուրիացիք և մարոնիտները. բոլոր ապստամբների թիւն այժմ 100 հազարի է հասնում: Թիւրքաց շատ տեղեր և ուժեր գրաւել են նրանք և ամեն տեղ պաշտպանութեան համար փոքրիկ գնդեր են թողել ու բազմութեամբ առաջ են գնում դէպի Հալէպ: Այս փաստերի մասին թիւրք լրագրներն առ այժմ բարեխոհութեամբ լռում են, երևի մայրաքաղաքի ժողովուրդը չըգրգռելու նպատակով: Բայց վերջինս ամեն ինչ գիտէ, թէ ինչեր են անում Զէյթունցիք, ժողովուրդի բոլոր խաւերում այժմ գլխաւորապէս այդ են խօսում: Լսւում է, թէ Զէյթունի ապստամբներին առաջնորդում են անձնուէր հմուտ զօրապետներ: Բայց դրանք միայն լուրեր են, որոնց ստուգութեան մասին չեմ կարող երաշխաւորել: Ստոյգ է այն, որ զէյթունցիք նիւթական օժանդակութիւն են ստանում, ինչպէս ասում են, մօտ օրերս մի տեղից 20,000 Օսմանեան ոսկի են ստացել: Երևի կայ, որ եթէ այդ աջակցութիւնը դադարի, այն ժամանակ զէյթունցիք անկարող կլինեն իրենց ներկայ դրութիւնը երկար պաշտպանել: Ի հարկէ կառավարութիւնն այս ամենը գիտէ և շտապում է ապստամբների դէմ մեծաքանակ զօրք ուղարկել: Ստացուած լուրերին նայելով այդ զօրքն արդէն՝ կազմուած 120 հազար զինուորից, ցամաքային ճանապարհով դէպի Հալէպ է ուղղուել:

ՓԱՐԻԶԻ ԹԻՒՐՔԱՑ ԿՈՄԻՏԷԸ

Փարիզի թիւրքաց կոմիտէը դարձեալ պետութիւններին է դիմել մի մեմորանդումով, որով նա հաստատում է, թէ 1877 թ. սահմանադրութեան բարձումով ոչնչացել են բոլոր ռէֆօրմները, որոնք այնքան անհրաժեշտ են թիւրքաց հպատակների բարօրութեան համար: Կոմիտէը խնդրում է, որ պետութիւնները Թիւրքիայի բոլոր հպատակներին իրանց հոգացողութեան առարկայ դարձնեն, ամենքի համար ռէֆօրմներ պահանջեն և վարչական կարգերը կերպարանափոխ անեն:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Թիւրք ազատամիտների կոմիտէի շրջաբերականը, որով ի միջի այլոց պահանջւում է օսմանեան սահմանադրութեան վերահաստատութիւնը, իւր վրայ է դարձրել Լոնդոնի լրագրութեան ուշադրութիւնը: Նշանաւոր օրգաններն առաջարկում են սուլթան Համիդին՝ Թիւրքիային սահմանադրական վարչութիւն տալ, ապա թէ ոչ նրան գահազուրկ լինել է սպառնում: „Standard" լրագիրը գրում է.

«Ներկայ ուժասպառ բանակալութիւնը պէտք է տեղի տայ պարլամենտական վարչական եղանակի, թէև աստիճանաբար ու պատշաճաւոր զգուշութեամբ: Հարկաւոր է մի այնպիսի վարչական եղանակ ստեղծել, որի շնորհիւ օսմանեան պետութեան տարբեր ազգութիւնների ու դաւանութիւնների համար հնարաւոր լինէր իրենց ցանկութիւնները յայտնել, իրենց կարիքները բացատրել և իրենց գործերը քննել: Չէ որ միւս պետութեանց մէջ ևս գոյութիւն ունին ցեղական ու կրօնական տարբեր տարրեր, բայց այդ բանը նրանց չէ արգելում սիրով ապրել, ընտրութիւններին մասնակցել և իրանց ներկայացուցիչներն ունենալ: Այդպիսի պայմանների մէջ Թիւրքիայի բնակիչները ևս ստիպուած կլինին փոխադարձ յարգանք և ներողամտութիւն ցոյց տալ իրար: Եթէ սուլթանը վճռի իւր իշխանութեան մի մասից հրաժարուել, դրանով նա հէնց իւր գրութիւնը կ'ամրապնդի, հակառակ դէպքում այդ ռէֆօրմների իրագործումը հարկաւոր կը լինի մի այլ մարդու յանձնել»:

ԱԼԱՇԿԵՐՏ

Ալաշկերտը, որ վաթսուած է երկար, բարձր ու ծաղկալից լեռներով, բաղկացած է բազմաթիւ հայաբնակ գիւղերից: Այդ գաւառի մէջ կայ երկու գայմագամանիստ տեղեր, մէկը Թօփրա-Գալէն, ուր կայ մօտ 500 տուն հայեր՝ քիչ խառն թուրքերով, և Ղարա-Քիլիսէն՝ իւր հայ-

թիքախան համարիա 300 տնով։ Թէ առաջին և թէ վերջինը հազիւ 3½ ժամ հեռաւորութիւն կունենան միմեանցից։ Դեռ երկու տարի առաջ «Արձագանքը» իւր աշխատակից պ. Ս. Կանայեանի բերանով ընթերցող հասարակութեան մտածելու նիւթ դարձրեց ի մասնաւորի այդ գրախտանման երկրի հետզհետէ անապատանալու զօրեղ պատճառները։ Երկրի ամայանալու այդ պերճախօսիկ յօդուածները, որ վերջացաւ երեք համարներում, գրկարաց հրատարակուեցան «Արձագանքի» 1893 թուականի 138, 139 և 140 համարների մէջ։ Իսկ 1894 թուականի 6-րդ համարի «Հայկական կառավարութիւն» առաջնորդող յօդուածի մէջ, որ ուղղուած էր ընդդէմ Թիֆլիզի Թերաց պ. հիւպատոսի սովորական «Հերքում»-ներից մէկի դէմ, դարձեալ «Արձագանքը» ընթերցող հասարակութեան սեղանի վրայ դրաւ մի ընդարձակ գաղթականական ցուցակ, որ կը վերաբերէր միայն այդ գաւառին և կը վերջանար այսպէս. «այժմ հազարներ է կազմում և շուտով հարիւր հազարների կը հասնէր, եթէ ռուսաց կառավարութիւնը նըպատակայարմար դատէր ամենքին ապաստանարան տալ։ Միայն Բագրեանդ գաւառից, այն էլ մի քանի ամսուայ ընթացքում, գաղթել են աւելի քան 1000 հոգի, ինչպէս երեւում է հետեւեալ ցուցակից.

ՑՈՒՑԱԿ

(այս տարուայ Բագրեանդ գաւառից Ռուսաստան գաղթածների).

	Ընտանիքներ կամ ծխեր.	Ար. մարդիկ մեծ ու փոքր.
1) Թօփրա-Գալէ գիւղաք.	4	56
2) Մօլլա-Սիւլէյման գիւղից	7	50
3) Չէտկան »	7	26
4) Խօշեան »	3	10
5) Խասատուր »	6	70
6) Չլկանի »	5	15
7) Եխնիթափա »	8	60
8) Խաչլու »	2	35
9) Համուտ (Ահմատ) »	7	60
10) Ղայաբէկ »	3	9
11) Աչխալէ, Հաճի Սաֆար և Փէրան գիւղերից.	17	32
12) Ղարաքիլիսէ (աւան) »	9	27
13) Երանոս »	4	13
14) Զամալու »	2	8
15) Երիցու գիւղ (Ղարաքիլիսէի բաժնի մէջ) . .	20	21
16) Խըտր գիւղից.	4	7
17) Մանկասար »	10	50
18) Գուր-Ղաւն »	20	10
19) Չլրոյի »	5	13
20) Մագրա »	7	30
21) Վանքի »	5	20
22) Ղումլի-Պուջախ »	5	25
23) Բօզի (Վեր. ու Ն.) »	10	30
24) Ղարաբաղար »	6	20
25) Ճաճան »	5	32
26) Քրուն, Մուսուն, Արծափ և Սարի գիւղերից.	20	83
27) Եօնջալու »	5	57
28) Ղազի »	3	30
Ընդամենը	209	898

«Եթէ, ասում էր յօդուածի վերջում, մինչև այսօր բիրդիքը հայերին կողոպտում էին իբրև սոսկ աւազակներ, իսկ այժմ արդէն այդ բանի համար նորա օրինական հիմունք էլ ունին, որպէս պետական ծառայութեան մէջ գտնուող անձինք»։

«Արձագանքի» յարգոյ խմբագրութիւնն, անշուշտ իւր յատուկ թըղթակիցների ու գործակալների միջոցաւ, այդ տխրաբոյր թուանշաններ ընթերցող հասարակութեան տուաւ դեռ երկու տարի առաջ, երբ Տաճկա-Հայաստանը ներկայիս համեմատական չափով խաղաղ ու անդորր կը համարուէր։ Վերջին երկու տարուայ ընթացքում ինչեր անսես, որ չեկան ու անցան ի մասնաւորի այդ գաւառներում։ Երկու տարիները՝ իրենց բազմապատիկ տառապանքներով՝ երկու արհաւիր կոթողներ կարող են մնալ դարուս պատմութեան արիւնոտ էջերի մէջ՝ որպէս աւանդ նորոց սերնդոց։

Որպէս իսկական արգասիք այդ վերջին արհաւիր տարիների, և լրացուցիչ տեղեկութիւն «Արձագանքի» Տաճկա-Հայաստանից ընդմիշտ հաղորդած սարսռազդեցիկ նկարագրութեանց, աւելորդ չեմ համարի սոտ առաջ բերել այդ գաւառի գիւղերի ամանից մի չոր ու ցամաք ցանկ. մի հանգամանք, որ կարող է մեր առաջ պարզել թէ նա երկու տարի առաջ՝ որքան տներից էր բաղկացած, իսկ այժմ՝ երկու տարուց յետոյ, որքան։ Եւ այդ արձանագրութիւնից յետոյ մեզ կը մնայ բոլորովին լռել իւրեւ ներկայ ողբալի դրութեան մասին։ Որովհետև հէնց նոքա, իրենց անխօս վիճակով, կարող են մեծ ստուեր ձգել նորա վրայ։

1) Թօփրա-Գալէն (աւան) որ մօտ 500 տուն էր, այժմ հազիւ 130 տուն մնացած լինի, այն էլ աղքատ ու տնանկ վիճակով։ Սա գաւառի գայմագամանիստ և առևտրական վայրն էր։ Այժմ առեւտուր չկայ, որովհետև վաճառատներ ջընջուեցան և կողոպտուեցան։

2) Ղարաքիլիսէն, դարձեալ աւան, գայմագամանիստ, համանուն գաւառակի վաճառատեղ, ունէր համարեա 300 տուն՝ քիչ թիքախան։ Այժմ 90 եւ չունի։

3) Մօլլա-Սիւլէյման գիւղ 350 տնից բաղկացած գիւղը՝ 60 տուն։

4) Մանկասարը, որ ունէր մօտ 150 տուն, այժմ չունի 20։

5) Չլկանին 130 տուն, իսկ այժմ 25։

6) Չէտկան՝ 160 տուն, բայց ներկայիս հազիւ 50.

7) Խասատուր ունէր մօտ 130 տ. իսկ այժմ չունի 10 տուն.

8) Երիցու գիւղը բաղկացած էր 120 տնից, այժմ հազիւ 20 մնացած լինի.

9) Եօնջալուն 125 տնից, մնացած է 25 տուն.

10) Եախնիթափան 90 տնից իջած է 25 տան.

11) Խաչլուն 80-ից՝ համարեա 15 տան.

12) Երիցու գիւղ (կաթոլիկ) ունէր մօտ 100 տուն, այժմ չկայ 30 տուն.

13) Ղայաբէգը՝ 50-ից հասած է 8 տան։

14) Զամուրլուն 40-ից՝ 4 տան.
15) Ղազլինը 70-ից՝ 15 »
16) Խօշեան 40-ից՝ 7 »
17) Քօփրվանը 90-ից՝ 2 »
18) Ձերօյի գիւղ 70-ից՝ 10 »
19) Ղարաբաղար 90-ից՝ 15 »
20) Հուջանը 80-ից՝ 30 »
21) Վանքի գիւղ 40-ից՝ 10 »
22) Խըզըր՝ 80-ից՝ 20 »
23) Բօլթին 40-ից՝ 8 »
24) Մաղրան 50-ից՝ 10 »
25) Սալի-բեղ 60 ից՝ 00 (2 դրօ)
26) Ահմատ 90-ից՝ 20 »
27) Քօրուն 50-ից՝ մօտ 15 »
28) Մուսուն 90-ից՝ 50 »
29) Սօֆլուն 50-ից՝ 00 (2 դրօ)
30) Ղումլու-Պուջաչ-70-ից 10 տ.։

Այս միևնոյն գծբաղդ վիճակին են ենթարկուած (30) Երանոս, (31) Ճաճուռ, (32) Բլուր, (33) Աչխալէն, (34) Արծափ, (35) Իւչ-Քիլիսէն (գիւղ) և միւսները։ Պէտք է խոստովանել, որքան որ սոցա մէջ կան խառնուած Թօփրա-Գալէի, Ղարաքիլիսէի, Իւչ-քիլիսէի և մասամբ Պաթնոցի ու Պայազիտի գաւառի ու գաւառակների գիւղերն. միւս կողմից սոքա չեն կազմեր այդ գաւառակների ընդհանուր գիւղերի ցուցակը։

Այս ցուցակն ինձ յաջողուած է ձեռք բերել դեռ Չաքիր փաշան այդ կողմեր ոտք չդրած։ Իսկ այնուհետև թէ մնացածներ ինչ վիճակի ենթարկուեցան՝ այդ չգիտեմ հաստատապէս։ Միայն այսքանս հաստատ է, որ Չաքիր-փաշայի մուտք գործելէն յետոյ ի մասնաւորի համիդիականները յարձակուեցան այդ գաւառների վրայ և անխնայ աւարի ու սրի մատնեցին նոցա, որոնց փախստականներից մի մասը հազիւ շունչ առաւ ռուսաց հողի վրայ...

***

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մայրաքաղաքի լրագրների ասելով այս օրերս կը ժամանէ Պետերբուրգ Կովկասի պ. կառավարչապետ գ ե ն ե ր ա լ - ա դ ի ւ տ ա ն տ Շ ե ր ե մ ե տ ե վ ը, որ ծառայութեան գործերով կը մնայ այնտեղ ամբողջ ձմեռ։

***

Կովկասեան գրաքննական մասնաժողովի նախագահ իսկ. պետ. խորհրդական Մ. Պ. Հակէլը նոյեմբերի 23 ին վերադառնալով արձակուրդից նոյեմբերի 24 ին ստանձնեց իր պաշտօնը։

***

Ձուսով հաստատուելու է Թիֆլիզում ռուսաց այգեբանական ընկերութեան մի նոր ճիւղ։ Այս ճիւղի գործունէութեան շրջանը երկրագործութեան պ. նախարարը որոշել է հետևեալ կերպով. 1) Կովկասի սահմաններում ճիւղը հոգում է այգեբանութեան, պտղաբանութեան, մեղուաբուծութեան և այլ տեղական կուլտուրաների կարիքների մասին. 2) գիւղատնտեսութեան այս մասերը զարգացնելու համար ճիւղը դիմում է թէ Կովկասի տեղական իշխանութեան և թէ Ընկերութեան կենդրոնին, որոնք ամեն կերպ նպաստում են այս կողմից ճիւղին. 3) ճիւղը գործում է ռուսաց այգեբանական ընկերութեան կանոնադրութեան հիման վրայ։

Անշուշտ այս օգտաւէտ ընկերութեան հաստատուելովը Կովկասի գիւղատնտեսական ընկերութիւնը եւ կարող է այսուհետև աւելի արդիւնաւոր կերպով գործել, իր ուշադրութիւնը այսուհետև կենդրոնացնելով բացառապէս Կովկասի երկրագործական կարիքների վրայ։

***

Երկրագործութեան նախարարութիւնը, մայրաքաղաքի լրագրների ասելով, մտադիր է հաստատել գինեգործութեան ուսուցչական դասընթացներ։ Այս դասընթացների ուսանողներ լինելու են գլխաւորապէս ծխական դպրոցների ուսուցիչները։

***

Վաղը, նոյեմբերի 27-ին, ազնուականների թատրոնում կը կայանայ Օէօդէր քոյրերի նուագահանդէսը, որի զուտ արդիւնքի մի մասը «Կավկազ»՝ լրագրի ասելով, յատկացրած է այն հայ գերդաստանների օգտին, որոնք վը նասուել են Թիւրքիայում տեղի ունեցած վերջին անկարգութեանց միջոցին և ապաստան են գտել Ռուսաստանի սահմաններում։

Անկասկած Թիֆլիզի հասարակութիւնը կոնցերտի համակրելի նպատակն աչքի առաջ ունենալով, կը լցնէ թատրոնի ընդարձակ դահլիճը. բայց հետաքրքրական է իմանալ, թէ պ. անտրեպրենեօր և իմպրեսարիօ Միլիմանեանը հասոյթի ո՞ր մ ա ս ն է (մի քառո՞րդը, կէ՞սը, 3/4-ը, 4/5-ը, 9/10 ը) բարեհաճել յատկացնելու այդ նպատակին։

***

Թագաւոր Կայսրը 1895 թուի հոկտեմբերի 26-ին, ամենաողորմածաբար բարեհաճել է շնորհել ա ր ծ ա թ ե ա յ մ ե դ ա լ ն ե ր՝ Ալէքսանդրեան ժապաւէնով կրծքի վրայ կրելու, Ջիբրայէլի պետական գիւղական ուսումնարանի ուսուցիչ Ա ր շ ա կ Թ ո ւ մ ա ն ե ա ն ց ի ն և Ալէքսանդրապոլ քաղաքի մասնաւոր դպրոցի տէր— Ա ղ է ք ս ա ն դ ր Ա ր ա բ ա ջ ե ա ն ց ի ն։

***

ԲԱՔՈՒՐԴԻՑ գրում են մեզ.

«Ընդհանուր կատարածների մէջն են եղեր Առաջնորդական տեղապահ Գիրոյեան Խորէն վարդապետը, որ որտախոխվում են արեր, երկսեռ դպրոցների մանուկներ, ուսուցիչներ և «Արձագանքի» թղթակից պարոն Գեդամը»։

***

Հինգշաբթի, 23 նոյմբերի, դերասանական խումբը ի նպաստ «Հրատարակչական ընկերութեան» ներկայացրեց պարոնեանի «Բաղդասար աղբար», յայտնի կոմեդիան։ Թատրոնը ծայրէ ի ծայր լիքն էր։

Մեր տաղանդաւոր երգծաբանի այդ գրուածքի առթիւ այս էջերում բաւական ընդարձակ խօսուած է։ Սակայն չենք կարող թագցնել մեր դժգոհութիւնը, որ մինչև այսօր մենք ծանօթ չենք պարոնեանի «Բաղդասար աղբար» աշխատութեան իսկականի հետ, մեր առաջև դրւում է միայն պ. պ. Սարգսեանի և Վրոյրի փոխադրութիւնը։ Ցանկալի էր, որ այդ աշխատութեան բնագիրը յանձնուէր «Հրատարակչական ընկերութեանը» լոյս հանելու համար։ Ոչ միայն «Բաղդասար աղբար»-ի մատենագրական արժէքը, այլ և այն հանգամանքը, որ հեղինակի միւս աշխատութիւնը՝ «Մեծապատիւ մուրացկանները» լաւ ընդունելութիւն է գտել հասարակութեան մէջ, անշուշտ կը դրդեն «Հրատարակչական ընկերութեան» վարչութեան փաղօրօք ձեռք բերել այդ նոր, մեր հասարակութեանը դեռ եւս անծանօթ երգիծաբանութիւնը և հրատարակել։

Առաջիկայ հինգշաբթի դերասանական խումբը ներկայացնում է մի պատմական ողբերգութիւն ի նպաստ պ. պ. Սարգսեանի և Մասինեանի։

***

Ստացանք Գ. Տէր-Թէլնի Մարդ Արիծ առասպելական պօէմը, (պատկերազարդ). փոխադրութիւն Դաւիթ Տէր Դաւթեանի։ Գինն է 20 կոպ։ Պօէմի բնագիրը ռուսաւոր է և իւր բովանդակութեան շնորհիւ շատ սիրելի է ժողովրդին։ Պ. Տէր-Դաւթեանի փոխադրութիւնն արձակ է, սակայն սահուն և պարզ լեզուով գրած։ Ցառաջաբանի մէջ կարդում ենք. «Այս պօէմայի մէջ, որպէս հայերում, արտացոլւում է Տաճկաստանի մեր ազգակիցների ներկայ կեանքը իւր սարսափելի դրութեամբ, որի պատճառով և փոխադրեցինք հայերէնի»։

***

Ֆրանսիական „Petit Journal" թերթի պատկերազարդ յաւելուածում գետեղուած է մի մի պատկեր, որ ներկայացնում է թէ ինչպէս հայերը յարձակուել են մի մզկիթի վրայ և ինչպէս տաճիկները վրայ են թափվում այդ մզկիթը հայերի ձեռքից ազատելու համար։ Բայց արի տես որ հայերին յանցաւոր դուրս բերելու ցանկութիւնն այնքան է կուրացրել ֆրանսիացի նկարչին, որ նրա մոռացմամբ յարձակուող հայերի և ոչ մէկի ձեռքը ոչ միայն զէնք այլ նոյն իսկ մի կտոր փայտ չէ գրել, այն ինչ պաշտպանուող տաճիկներից իւրաքանչիւրը մի ձեռքին սուր ունին բռնած, միւսում ատրճանակ...Պատկերի տակ խոշոր տառերով գրուած է՝ «Attaque d'une mosquée par les Armeniens»։ Անշուշտ աւելի ճիշդ կը լինէր և բնական դորա փոխարէն և յամենայն դէպս ֆրանսիական ճաշակին համապատասխան գրել՝ Не любо не слушай, а лгать не мѣшай!

***

Այս օրերս Թիֆլիզի Առևտրական բանկի Բաքուայ բաժնում, ինչպէս հաղորդում է «Կասպի» լրագիրը, մի բաւականին ճարպիկ գողութիւն է տեղի ունեցել։

Մոսկվայի բանկերից մէկն ուղարկած է եղել Թիֆլիզի Առևտրական բանկի բաժնին չորս վիճակախաղի տոմսակներ (մօտ 1000 ռուբլի արժողութեամբ)՝ Թէհրանի ռուսաց դեսպանատան առաքելու պատուէրով։ Արդ այդ տոմսակները, կառավարչի ներկայու-

ՖԵԼԻԵՏՕՆ

Մ Ի Պ Տ Ո Յ Տ

1894 թ. Մեծ-պասի վերջին շաբաթն էր. Թիֆլիզ լուր հասաւ, թէ ողջ Ալաշկերտը պոկ եկած, թափուել է Կարսի նահանգը։ Քրդերն ու զապթիաները հայերի սոսացածները խլել, երկրից քշել են։ Վատարանդի հայերը՝ կնիկ, աղջիկ, ծերունի, ցրտատար եղած լցուել են Բասենի բարձրաւանդակների ձնի երեսներին ու անօթութիւնից շաղ անցած այս ու այն կողմը կոտորւում են։ Հաց չկայ ուտելու. ձիւնը փորում, տակից արմատներ են հանում, նրանով սև օրը մթնացնում։ Թիւը չէր իմացւում, թէ քանի հոգի են հալածական հայերը. օր օրի վրայ աւելանում էին ու ծանրաբեռնըւում Կարսի նահանգի հայերի վրայ, որոնք տանից այն էլ խեղճ էին։

Կայծակն այնպէս սրտայոյզ չէր անիլ հայերին, ինչպէս սովի լուրն արեց։

—Մենք ինչացու ենք այստեղ, ասում էին Թիֆլիզի ու այլ տեղերի հայերը, հայուհիները, երբ մեր արիւնակիցները քշուած սիրելի հողից ու ջրից, չունչները բերանում հալածական եղած հասել են մեզ մօտ ու անօթութիւնից, սովի ձեռից կոտորւում են։

Սովեալների ճոճը մոլորուած ոչխարների պէս հասել էր ս. Էջմիածնի պատերի տակը.—Հաց ենք ուզում, Հայրիկ օգնութիւն արա, մեռնում ենք, աղաղակում էին նրանք։

Ամբարները բացուել էին, ժողոված ալիւրը, ցորենը բաժանուել։ Հալածականների ուրկանը ահագին էր, ջրի պէս անընհատ գալիս էր Բասենի կողմերից. ամենքը օգնութիւն էին ուզում Հայրիկից։ Մեծ ջրի ուրկանին զօրեղ պատուար էր հարկաւոր, ասաւ Հայրիկը հրաւէր կարդաց իւր անկարօտ որդիներին. «Բացէք ձեր սրտի դռները. որդիքս կոտորվում են»։ Սրբազան կոնդակը ցնցեց ամենին և հեզիկ պէս հայերի ծոցերից հասցին նպաստները։ Այդ միջոցին թոյլատրած էր ժողովարարութիւն անելը։

Խմբակներ էին շրջում. նրանցից մինը չորս հոգուց բաղկացած՝ երկուսն օրիորդ, մինը երիտասարդ, չորրորդն էլ մի երէց, զանգուած Քրիստոսի խօսքերով. «Քաղցեալ էի, եկաք ինձ մօտ, սոված էի, կերցրիք, ակլոր էի, հագցրիք, ագռաւ էի մխիթարեցիք ինձ», անցաւ թուրքի մէչիթի մօտից դէպի կամուրջը. ու վստահութեամբ սկսեց խելի (գլխի) դուքանների մտնել։ Աջ ու ձախ դուքնառէրները ամենքն էլ հայ էին ու չնչին վաստակով իրանց ընտանիքները պահող։

—Սրանից ստացած կոպէկն աւելի արժէք ունի, դատողութեամբ են վստահում, ասեց օրիորդներից մինը. հետաքրքիր է, թէ ինչպէս կը վերաբերուին այսպիսի մարդիկ դէպի սովեալները։ Պնդում են թէ զարգացումն է մարդու պարտաճանաչ ու կարեկցող դարձնում. այսօր փորձը ցոյց կը տայ. կամ կը հիասթափուիմ ու կը սկսեմ արհամարհանքով նայել հասարակ դասակարգի վրայ, կամ աւելի ու աւելի յարգանացս հաւատքը աւելացնելով կը շարունակեմ պաշտել, սիրել նրան։

—Սկսենք, առաջարկեց երէցը։

—Սկսենք հաւանութիւն տուին խումբի միւս անդամները։ Երէցն ու երիտասարդը մտան մասպրծի խանութը. օրիորդները դուրսն էին։ Մսագործները երկու էին. մինի ձեռին լայնաշեղը ոտքթիւը, միւսի պաղուցում չիբուխը։ Երէցը կարճառօտ պատմեց շրջելու նպատակը. սաթիլով դասաքը տեղեց ու անխօս մոտեցաւ դախլին եղած արծաթ փողերը քաշեց որ տայ երէցին. չիբուխաւորը նայեց փողերին ու ասաց.

—Թամամիր մանէթը, չես տեսնում ովքեր են եկել ման գալու։

Այդ րոպէին ոչխարածը նորս եկաւ ասաց.—ապա, կուզե՞ս, մարթելու ոչխար բերեմ։

Նրան պատասխանելու տեղ—տխրած կերպով ասեց.—Մկօ, ձիր կողմերը սով է նիգի։

—Աղա ջան, լսել եմ, կասեն, տաճիկները խայիրին խռկել են տուն ու տեղից. էնոնք եկել են Ղարս. շատ նեղութիւն կը քաշեն։ Տաճկի խաղը կտրուի։

—Մի արաղ էլ Մկօյի կողմից տուր, ասեց մեծ դասաքը, և իմ հոշուին գրիր։

Դուրս եկան այդտեղից, դեռ միւս խանութին ու կրպակին չմոտեցած, արդէն ամեն կողմից նայում էին ու կասես հայեացքներով կանչելիս— էկէք ձիր հասողուն մասալ, մենք էլ հայ ենք, մենք էլ մեր կոպէկը տանք։ Ամեն կողմից հըրաւիրում էին ու սև, սպիտակ, թուղթ տալիս դասաքներ, բուչաղչիներ, թըռանչքչիներ, դալթաղչիներ, բաղկալներ՝ թաքտիս ման ածողներ։

—Սոված ի պաղը իս լաւ գիդիմ, ասում էր կինտօ Տեփանը, իս պատի վուխտս շատ իմ սոված էլի. առէք իմ գանձանակը։

Գանձապահ օրիորդը բերկրանքից ժպտում էր. պատկերից երեւում էր թէ սիրտն ասում է՝ կեցցէ հասարակ ժողովուրդը։

Բախկալ Ս. որ ձկան գործով էր պարապւում, խմբի սպասածից աւելի նըւիրեց ու աւելացրեց.

—Եթէ կնիկս իմանայ, որ իր սրբոս վարժուհին սովեալների համար փող է հաւաքում, նա էլ առանձին կըտայ։

Խաչապանեանի մօտից անցնելով ուզում էր խմբակը միւս կարգն անցնել, ուր մեծ մասը երկաթագործներ ու ներկարարներ են, ահա կիչակալած չորեքով խաչպանը մուշտարիներին թողած դուրս վազեց.—բաս ինձ մարդու տեղ չէք դնում, ես էլ սոված մարդկերանց համա իմ ամեն օր ծուխս ու մուխս կուլ տալիս. համեցէք իմ գանձանակը—էս օր հէնց կիմանամ ծամ իմ պահել. առէք տաս շահին ու պակասը բաշխեցէք։ Ու վերջը վրայ բերեց վրացերէն մի քանի դուրեկան բառ, և ադամանը ձեռին գնաց երկար տախտակի շուրջը նստոտած մուշտարիներու մօտ, որ անալի բաժինները համովացնի։

Այդ վայրկենին կօշկի դուքանում մի վրացի հաց էր թխում, տեսնելով խմբակի մէջ օրիորդներ, պինչը կալած եւ մզուեց դէպի տախտի վրայ դարսած անկողինը և կարպետի տակից մանր փողեր քաշելով առանց համբերելու բերեց շտապով երէցին յանձնեց ու դարձեալ շարունակուեց թոնրի մէջ կախուելով հաց թխելը։

Նախ քան դարբինների մտնելը երէցը տեղեկութիւն տուեց, թէ ամենից ինչ կարելի է սպասել. շատերին անձամբ ճանաչում էր։

—Այստեղ ամենքը իրանց ուժի չափ կըտան, բացի երկու մարդուց, որոնցից մինը դալլաք է, այն էլ եարամազ դալլաք, ինչպէս լինում են նրանց մեծ մասը. միւսն էլ դարբին՝ երեք եղբայր, լաւ կարողութեան տէր, բայց ժլատ ու բըկլատ. այնպէս փողատէր են այդ օրհնեալ հոգիքը, որ եթէ Աստուած նրանց շունչն ու վաստակած փողը կշռէք նժարներում դնի և հարցնի—որը կուզէք վերցնել։ Նրանք կը պատասխանեն—շունչներս առ, փողը թող։

Դալլաքի դուքանը նրբքի ծայրին էր. հէնց գանը մտեցանք թէ չէ, իսկոյն ժպտալով գիմաւորեց ու ասաց.

—Տէրտէր, այ, մուշտարիս նստած սովի մասին է պատմում. ասում է երեխէքը ձնի վրայ պէն են գցում կնանիքը, որովհետև իրանք օրերով սոված են, ծծերում կաթ չունին, որ երեխանց կերակրեն։ Ա՛ռ էս աբասին, ու պակասը ների։

—Օրհնեալ լինիս, ասեց երէցը.—շնորհակալ ենք, ասին միւս անդամները ու կարգով բարձրացան։ Մրի ու բըրածքի մէջ կորած արհեստաւորները, որոնք օրական հազիւ 20—50 կ. են վաստակում, խոնարհութեամբ լսում էին խմբակի յորդորները ու իրանց լուման տալիս։

Վերջապէս հասանք մեծ դարբնի խանութը, ուր երեք տեղ սալ էր դէր թոզած. աշխատանքը եռում էր. փուքսի վշշոցը, քուրայի վշշոցն ու թէժ պէծերի դէս ու դէն շաղ տալը, նրանցից գոյացած մրճիղն ու հուրքը, մուրճերի իրար ետևից կռնասլոր նարեկ գալը, գլխաւոր ուստայի հրամանն ու ճիչը մի տեսակ զլլլան, եփուն կաթսայ էր ներկայացնում։ Դարբնոցում միղմ ձայնը չէր լսւում. միայն վշշոց, փշշոց, ճլոց ու զըըըոց։

Այդպիսի միջոց խմբակն անվստահութեամբ կանգ առաւ դարբնոցի առաջ։ Գլխաւոր վարպետը, որ աւագ եղբայրն էր, իսկի այնուամ չզգաց թէ մարդիկ են եկել։ Ձեռի երկաթը ծեծել ասեց, նորից քուրան դրեց, աւազ ցանեց կրակի վրայ, հրամայեց որ ածուխ աւելացնեն. յետոյ մօտենալով չէմքին հարցրեց.

—Ի՞նչ էք ուզում, բահ, կացին, թէ՞ չանգալներ։

—Մենք դրա համար չենք եկել, խօսեց երիտասարդը։

—Բա ինչի համար էք կանգնել։

—Մի քիչ մարիֆաթով խօսիր, օրհնեալ հոգի, յարեց երէցը. մի՛ քանի ան գամ խօ չես տեսել էս մարդկերանց քո դուքանի դռանը կանգնած։

—Հ՞ը. բաս ինչ է, տէրտէր, փող ուզելիս կըլէք, է՞լի։ Չէ՞ք տեսնում մեր չորեքի հալը, սաղ տեղ չկայ, կո՞ակից ծակծկուել է։ Մեզանից էլ խեղճ մարդ կա՞յ աշխարհում։

Օրիորդները չմնացին, զզուելով հեռացան դէպի վերև։ Դարբինը բարձր ձայնով չանտ թակելուց եւր մի քանի սև փող հանեց թիթեղի արկղիկից ու կիսաջան լինելով ասեց։ Երէցի նպատակն այն էր, որ այդ անզգայ մարդից կոպէկ պոկի։ Փողն առնելուց ետը աւելացրեց կատակով.

—Պարտական լինիմ, թէ տարու գլխին դասակ չունենաս. դու փորձիր բարի գործերի համար աղատ առատ փող տուր։

Երէցն ուզում էր կոշկի դուքանն անցնի, որ օրիորդների մօտ գնայ, երիտասարդն ասեց.—տէր-հայր, արի այս ուստին (վարպետին) էլ այցելենք։

Դուքանում մի աշակերտ էր. չաքուչ էր խփում։ Երկու մանուկ պատերի տակ երկաթի կտորների հետ խաղում էին. նրանց հայրը ախալուզանց էր. գլխին հին մահուդէ գտակ, առջևը կաշուէ գոգնոց, միջին հասակի մարդ էր. դուրեկան երեսով, քիչ նիհար։

—Մի տուն լիքը երեխէք ունի. դըրանից փող ուզել կը լինի՞, նկատեց երէցը։

—Տէր-հայր, սխալւում էք, գութն ու ողորմը որդատէրերի մօտ է, պնդեց երիտասարդը. փորձի համար մտնենք սրա խանութը։

Ասին ու մտան։ Օրիորդները հեռու կանգնեցին։

Դարբինը աչքերերն տեսաւ թէ չէ՝ կանգնեց, ասեց աշակերտին.—Օրհնեա

թեամբ, դրուել են ծրարի մէջ, հարկ եղած եղանակով կնքուել դրոշմով և ուղարկուել փոստը իբրև պատուիրած նամակ համաձայն Մոսկվայից ստացած հրահանգի։ Այդ ծրարը տարել է փոստը բանկի մի հատուկ ծառայ և մի քանի րոպէից յետոյ փոստից պատշաճաւոր ընկալագիրը ստանալով յանձնել է ընկալագիրը բանկի պ. կառավարչին։ Անցնում է մի քանի ժամանակ... Եւ յանկարծ Թէհրանից տեղեկութիւն է գալիս, որ ծրարն ստացուել է, կնիքներն անվնաս են եղել, բայց երբ ծրարը բացել են, փոխանակ տակդասարեր տոմսերի, մէջը երևացել է հասարակ լրագրական թուղթ, ճիշտ չորս տոմսակներին համապատասխան ծանրութեամբ։

Այդ դէպքի մասին, բանկի բաժնի կառավարչի պահանջմամբ ոստիկանական արձանագրութիւն է կազմուած և գործը յանձնուած է պրոկուրորին օրինական ընթացք տալու և այդ խորհրդաւոր պատմութիւնը պարզելու համար։

* * *

ՁՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Սրանից մի քանի օր առաջ Կովկասի Բարեգործական-ընկերութեան Ղուշու ճիւղի գրադարան ընթերցարանի ծառան կողոպտեց այդ ընկերութեան գանձարանը, որտեղ մօտ 150 ռ. փող կար։ Բայց երեք օրից յետոյ այդ ընկերութեան համակրող մի քանի մարդիկ համոզեցին ծառային գաղացած փողը նորից վերադարձնել։ Բարեբաղդաբար ծառան նորերս վերադարձրեց այդ փողի մեծ մասը և խոստացաւ մնացածն էլ մի քանի օրից յետոյ վճարել ընկերութեան»։

* * *

Ստացանք պ. Տիրօրժեվսկու խմբագրութեամբ լոյս տեսնող „Собраніе стихотвореній Виктора Гюго въ переводахъ русскихъ писателей“ ժողովածուի VIII-րդ տարակը, որ պարունակում է իւր մէջ 21 բանաստեղծութիւն, որոնցից 17-ը առաջին անգամն են լոյս տեսնում ռուսերէն թարգմանութեամբ։

* * *

ՔՂԵՐԻՑ ՄԷԿԸ

—

«Արձագանքի» ընթերցողները՝ կարդալով „Neue Freie Presse“-ում օրիորդ Մարգարիտ Մելիք-Բէգլարեանի մասին գրած ընդարձակ ոգեկոչուած յօդուածը, գուցէ զարմանան, որ Եւրոպայում մի համալսարանական օրիորդի հրապարակ դուրս գալն այդպիսի ջերմ համակրութեամբ է ընդունուում։ Բայց ընթերցողները գուցէ աւելի զարմանան, եթէ իմանան, որ իրօք Եւրոպայում, մանաւանդ Գերմանիայում և Աւստրիայում, կանանց բարձրագոյն կրթութիւնն այնպիսի սահմանների մէջ է դրուած, որ համալսարանական կինն իսկապէս որպէս մի հոգեւորական երևոյթ է նկատւում այնտեղ։ Ես յիշում եմ այն զարմանքը, որով ընդունում էին օրիորդ Մելիք-Բէգլարեանին, երբ նա՝ որպէս ուսանողուհի Լայպցիգումն էր գտնւում։ Մի բաւականին ուսեալ երիտասարդ մինչև անգամ հարցրեց ինձ՝ ակնարկելով օրիորդին. «մթթէ դուք համոզուած էք, որ սրիորդը կարող է ըմբռնել այն գիտութիւնները, որ նա լսում է համալսարանում. ես պատասխանի փոխարէն ծանօթացրի այդ երիտասարդին օրիորդի հետ. երիտասարդը մօտենում է ինձ և ասում. «օրիորդը ցրուեց իմ ամենախոր նախապաշարմունքը կանանց ընդունակութեանց մասին. sie ist eine wahre Gelehrte (նա կատարեալ ուսումնական է)։ Եւ այդպիսի ստոր կարծիք կանանց ընդունակութեանց մասին շատ բնական է մի երկրում, ուր կնաջ նայում են գլխաւորապէս որպէս մի արարածի, որ ստեղծուած է երեխաներ ծնելու և խոհանոց կառավարելու միայն։

Զուրիցերիայի հինգ համալսարաններում միայն 8 գերմանուհիներ են ուսանում, այն ինչ օտար ուսանողուհիների թիւը 580-ից անցնում է։ Լայպցիգում ես ծանօթացայ մի աղջկի հետ, որ երկու տարուց աւելի էր ինչ Լայպցիգումն էր և մասնաւոր պրակտիկայով էր պարապում։ Երբ ես նրան հարցրի իր գործի դրութեան մասին, նա ինձ տխրութեամբ պատասխանեց. «Եթէ ես չափսոսայի իմ դիտութեան վրայ կորցրած թանգ աշխատանքս, ուրախութեամբ գործատուի պաշտոն կըստանայի մէկ խանութում, քանի որ երկու տարում 18 հիւանդ եմ միայն ընդունել և դրանցից 13ը օտարներ են եղել և, միայն 5ը գերմանացիք»։

Լայպցիգի համալսարանում 1893 թուին 14 կին էին յաճախում որպէս ունկնդիրներ. դրանցից երեք հոգի էին միայն գերմանուհիք, մնացեալները կամ ամերիկուհիք էին կամ անգլուհիք։ Եւ ամենից ցաւալին այն էր, որ գերմանացի ուսանողութիւնը խիստ թշնամանքով էր վերաբերվում դէպի կանանց բարձրագոյն կրթութիւնը։ Ես աչքովս տեսայ թէ ինչպէս 150 հոգու չափ ուսանողներ սաքները քսքսացրին (դժգոհութեան նշան), երբ ա ուղիղ օրիորդ մտաւ մի կին՝ ֆիզիկայի դասախօսութիւնը լսելու։ Ամաչկոտ, վրդովուած օրիորդը դադարեց այլ ևս յաճախելուց այդ դասախօսութեանը»։

Մենք՝ հայերս կարող ենք միայն պարծենալ, որ ոչ միայն սկզբունքով պաշտպան ենք կանանց կրթութեանը, այլ և գործնականում տալիս ենք այնպիսի կին անհատներ, որպէս են օր. Մելիք-Բէգլարեանները, Թադէոսեանները, Քալանթարեանները (կին բժիշկ Ասատրեանցի) և դրանց նման շատերը, որոնց ցանկանում ենք ողջ սրտով յաջողութիւն իրենց գործունէութեան մէջ՝ թէ որպէս մասնագէտների և թէ որպէս հասարակութեան կրթուած և օգտակար անդամներ։ Երանի՜ թէ մի քանի տարի յետոյ մենք այդպիսիների մասին կարողանանք ասել՝ «շատերից մէկը»։

Ս. Ա.

ՏԱՃԿԱ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՄՈՒԶԻՑ մեզ գրում են հոկտ. 25 թուով.

«Անցոյս 12-ին Հանանցի և Ջըպրանցի քիւրդերը յարձակուեցան Ինանակնեան լեռան թեների և ստորոտների վրայ փռուած հայ գիւղերի վրայ և աւարի մատնեցին Բաղու, Բաղլու, Կուարս, Ս. Կարապետի վերին և ներքին Փականներ, Մեղտի, Սորտար, Խրյպեան, Գոմս, Ալատին, Աւրան, Տէրիկ, (Աշտիշատ), Ջիսաու, Կուրավու, Նոր Ակն, Փալաս և միւսներ։

Աւրան գիւղը, ուր կը նստի նաև գայմազամը, երկու անդամ յարձակման ենթարկուեց։ Բացի ընդհանուր աւարառութիւնից, տուաւ 10 զոհ։ Բաղլուն՝ 2 զոհ. Խրյպեան գիւղը՝ ուզիղ 3 ժամուայ դիմադրութիւնից յետոյ՝ կընկճուի սոսկալի աւարառումով և կոտոյ 2 մարդկային զոհ։ Սուլուխ գիւղացիք բաջութեամբ յետ կը մղեն թշնամուն՝ առանց մի բան տալու։ Ողջանցիք կը հետեւեն թշնամուն և յետ կը խլեն թշնամուց իրենց ոչխարների ու տաւարաց հօտեր և գերի կը բռնեն մի քիւրդ։ Վերջինիս կը ներկայացնեն խըրսաղաբին, որ պատժելու փոխարէն անմիջապէս կարձակէ։

Այս անլուր աւարառութեանց մասին Առաջնորդական տեղապահ Հայր Զարդան վրդ. և քաղաքական ժողովը դիմում արին ինչպէս միութիւրիֆ փաշային, նոյնպէս Անգլիայի պ. հիւպատոսին, որ միջոցներ ձեռք առնեն վերջ տալու այդ սոսկալի հանգամանքներին։ Աւարառութիւնն ու կողոպուտն ընդհանուր է։ Իսկ ըստանութիւնը մասնաւորապէս այն անհատների վերաբերմամբ, որոնք հասարակութեան մէջ գեր և անուն ունին։

Գալով քաղաքի մասին, Մշոյ հայութիւն և շուկան ևս պիտի ջնջուէր, եթէ Բաղէշոյ կոտորածի լուրը երկրորդ օր 14-ին չհասնէր։ Հայերն իմանալով այդ բանը, հակառակ կառավարութեան ամեն տեսակ խոստացած ապահովութեան, ոչ մնաբէն դուրս եկան և ոչ ևս խանութներ բաց արին։ Անգղիայի պ. հիւպատոսը վերստին դիմում արաւ կառավարութեան և ապահովութիւն խնդրեց հայերի կեանքի ու գոյքի համար։ Նոյն դիմում արին նաև Առաջ. տեղապահն և քաղաքական ժողովն։ Կառավարութիւնը պահանջեց վերջիններիցս, որ անյապաղ գրեն Սասուն և յետս խնդրեն այնտեղ գտնուող միսիոնարական խումբը, առաջարկելով, որ նոցա ներկայութիւնը կարող է առաւել կատաղեցնել մահմեդականները, իսկ ինքը այդ պարագային իրան պատասխանատու չի գտներ։ Հայերը կատարեցին կառավարութեան այդ ապօրինի պահանջը։

Տասն ու հինգ օր է, ինչ կառավարութիւնը արգելեց Սասուն ցրտան և այլ մթերք ուղարկել։ Նա յայտնեց, որ Սասունցիներին խնամելու պատրուակի տակ, կուզէր այնտեղ ապստամբութեան սղին կրկին վառել։ Երէկ և այսօր, իշխանութեան կարգադրութեամբ, բազաբս լցուեցան մօտ 200 զինեալ չէրքէզներ և 300 Խութեցի քիւրդեր... Շուտով այստեղ պիտի հասնի Մուսուլի կողմից երկու բանակ զօրք ևս։

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ

Հոկտ. 23-ին ս. Պետերբուրգի դատարանական պալատը, դասակարգերի ներկայացուցիչների մասնակցութեամբ, քննեց Պոկրովում ստիկանութեան վերաբերեալ մի վերին ատեանի բնորոշ գործ։

Մեկպրական գրութիւնից և դատաստանական հետախուզութիւնից պարզուեցաւ, որ 1893 թ. յուլիսի 25-ին, Բականի գիւղում (Վլատիմիրի նահանգ) կախուած է գտնուել մի Լատիշ գիւղացի, Իվան Բոդդանով Բրօք։ Նորա մահուան պատճառների մասին հարցաքննութեան արել է պրիստաւ Պետրովը, գաւառական բժիշկ Ելիզարովի մասնակցութեամբ, որ դիակը կտրտելուց յետ ցոյց է տուել, որ խեղդուածն ինքն իրան է կախել և թէ մարմնի վրայ երևցած քաղաքացի կապոյտ շերտերը պէտք է դիակնային բծեր համարել, իսկ գլխի վէրքը, անուշադրաբար, առաջացել է գլուխը ծառին խփելուց, կախուելու ժամանակ։ Սակայն գործն իսկապէս բոլորովին այլապէս է եղած. 1893 թ. յուլիսի 20-ին մի ոմն Մարտուլի ագարակից կորչում է մի կտոր բաճան, որ արժէր 3 ռուբլի։ Գողութեան մէջ տասներկու տարեկան հովիւ Բոդդանովին կասկածելով ուրեմնիկ Ադամովը կանչեց նրան և կապելով ծառին երկու ժամ ծեծեց մտրակով, պահանջելով, որ անուանի այն անձին, որին տուել է գողացած բաճանը։ Բոդդանովը երեխան, ինչպէս յետոյ ինքը յայտնեց, գալիացած վիճակի մէջ տալիս է առաջին յիշած մարդու, այն է Բրօքի անունը։ Թէև այս յայտնագործութիւնը ճշմարտանման չէր, որովհետև Բրօքը չէր կարող Մարտուլից բան գողանալ, բայց և այնպէս Բրօքը կոչուեցաւ ուրեմնիկի մօտ, որ նրան երեք օր հարց ու փորձի ենթարկեց։ Առաջին օրը հարց ու փորձ յանձնուեցաւ Սվիյան, Սարիդ և Ստաֆեղսկի հարիւրապետներին, որոնք Բրօքին կապկպեցին այնպէս, որ նա չկարողանայ շարժուել և մի ժամ շարունակ բարձրացնում էին նրան և վայր ձգում գետին, պահանջելով որ խոստովանուի։ Որովհետև հարց ու փորձի այս եղանակը հետևանք չունեցաւ, Ստաֆեղսկին մի բիր առնելով սակաւ կապուած Բրօքի գլխին հարուածել, ասելով, որ եթէ նա չի խոստովանուիլ «նրա ուղեղը ցրիւ կըտայ»։ Իսկ երբ այդ հարց ու փորձն էլ անյաջող եղաւ, միւսը օրը ինքն Ադամովն սկսեց «հետախուզել եղեռնագործութիւնը»։ Բրօքին բերին նորա մօտ և կապկպեցին, ապա Ադամովն ու Սվիյան հարիւրապետը երկու ժամ հարուածեցին նրան մտրակով և լախտով ու այս միջոցին նորա ազազակի ձայնը խըլացնելու համար ուրեմնիկը ձախ ոտով կանգնում էր Բրօքի գլխի վերայ, իսկ աջ ոտի կրնկով խցում էր նորա բերանը։ Ոչ մի հետևանքի չըհասնելով, քննիչները Բրօքին թոյլ տուին տուն երթալու. բայց նա այնպէս թոյլ էր, որ ոտի վրայ կանգնել չէր կարող և ուրեմնիկի տնից մինչև իւր բնակարան երկու վերստ տարածութիւնն անցաւ սողալով։ Ծառայութեան գործով ուրիշ գիւղ գնալով, ուր տեղական տօնախմբութիւն կար և խնճոյք, ուրեմնիկը հարց ու փորձի շարունակութիւնը յանձնեց Դրօզդին։ Այս վերջինը յուլիսի 24-ին կանչեց Բրօքին իւր մօտ և սկսեց հարուածել նորա գլխին երկաթեայ ձողով այնքան, մինչև որ Բրօքը սկսաւ խռմփալ և երեկոյեան վախճանուեցաւ։ Դրօզդ Դուդա գիւղացու օգնութեամբ դիակը տարաւ Բաքանի գիւղը և իւր թոկով կախեց նրան, հաշիւ անելով, որ Բրօքի մահը կը վերագրուի անձնասպանութեան։

Դատարանական պալատը բոլոր մեղադրեալներին յանցաւոր համարեց և վճռեց Ադամովին, Սվիյանին Սարդին և Ստաֆեղսկուն զրկել բոլոր իրաւունքներից և արհամարհանքների ուղղիչ բաժինը տալ երկու տարի և 8 ամիս ժամանակով, իսկ Դրօզդին զրկել բոլոր իրաւունքներից և բանտարկել մի տարի և 4 ամիս ժամանակով։

ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պ. Խմբագիր.

Ձեր լրագրի №130-ում հայ գերատանական ընկերութիւնը մի նամակ տպեց, որ մի պատասխան էր պ. Յով. Յովհաննիսեանի նամակին։ Իմ մասին ընկերութիւնը գրում է՝ «պ. Պարսեանն ընկերութիւնից հրաժարուեց և մեր առաջարկած 150 ռ. և մի բենեֆիսին պատասխանեց՝ «քիչ» է»։

Բոլորովին ճիշտ է։

Դրական փաստերի վրայ հիմնուելով՝ դէմ եմ գերատանական ընկերութեանց, և իմ այդ համոզմունքս հիմնուած է ոչ դատարկ այլ ամենաազդու փաստերի վրայ, ինչպէս իսկոյն կը տեսնի ընթերցողը։ Ես արդէն մի անգամ, երկու տարի առաջ, պատիւ ունեցայ «Արձագանքի» մէջ գրել, որ ոչ մի տեղ Եւրոպայում (թէ մայրաքաղաքներում, թէ մեծ քաղաքներում) չկան թատրոնական ընկերութիւններ, այլ տարին 12 ամիս ապահովուած որոշ ռոճիկներով դերասաններ։ Միակ թատրոնը, որ ընկերութիւն անուն է կրում, Փարիզի «Comédie Française»-ն է, այն էլ ոչ թէ բոլոր դերասանները սոսիեռներներ են, այլ յայտնիները, և այդ ընկերութիւնը—ըստանալով թատրոնը իւր բոլոր պարագաներով—ստանում է նոյնպէս մի միլիոն ֆրանկ տարեկան օժանդակութիւն ֆրանսիական հասարակապետութիւնից։ Բերլին, Վիէննա, Լոնդոն և միւս մեծ քաղաքները միշտ օժանդակում են իւրեանց թատրոններին։ Ռուսաստանի լաւ թատրոններն են արքունական թատրոնները, որտեղ դերասանները 12 ամիս ռոճիկ են ստանում, և 20 տարուց յետոյ՝ ստանում են կենսաթոշակ։ Տասը տարի սրանից առաջ Ռուսաստանում ընկերային ընկերութիւններ կազմուել, ոչ թէ դոցա օգուտը ճանաչելով — այլ որպէս զի անտրպենորները խոյս տան տէրութեան նոր օրէնքից, որ պահանջում էր և հիմա էլ պահանջում է, որ ամենայն անտրպենոր պէտք է 2 ամսուայ ռոճկների ապահովութեան գրաւական ներկայացնի արքունական գանձարանին։

Հայկական բեմն իբրև նոր բեմ, անպատճառ պէտք է լինի ազատով զբաղուեան մէջ, որ ամեն կողմից կարողանայ մեզ ապացուցանել, որ մենք ունենք դերասաններ, որոնք ունակ են ազատ զբաղուելու։ Ինչպէս ասացի, մենք ունենք դերասաններ, որոնք ունակ են

հայ գրաւել խելօք, զարգացած - ինտելլիգենտ ուժեր: Բայց ո՞ր ինտելիգենտը, տեսնելով հայկական բեմի անապահովութիւնը, կմտնենայ նորան: Ես քաջ գիտեմ որ պ. Սանփանեանը լաւ ապագայ է խոստանում հայոց բեմի համար. բայց հիմնուելով ընկերութեան խօսքերի վրայ հարցնում եմ. ինչո՞վ է ապրում նա և՞ թէ բոլոր միւսները: Չէ՞ որ մի երկու տարի չարչարանք կրելուց յետոյ պէտք է փախչի առանց յետ նայելու: Դերասանին հարկաւոր է ուտել, խմել, հագնուել, իսկ յայտնի է որ հայ բանաստեղծ, վիպասան, հրապարակախօս, նկարիչ, դերասան աւելորդ խօսքեր են հայ բառարանի մէջ. և նոքա միշտ ապրել են և կապրեն... միմիայն օդով: Երբ յիշում եմ որ Գամառ - Քաթիպայի նման բանաստեղծի ընտանիքն անապահով դրութեան մէջ է մինչև օրս, չեմ զարմանում հայ դերասանի վիճակի վրայ: Մինչև օրս մեր յայտնի, մեծատաղանդ Գ. Սունդուկեանցը ոչ մի բանով չէ վարձատրուած հայ հասարակութիւնից. արդեօք մոռացե՞լ են շատերը, որ շուտով նրա 35-ամեայ յոբելեանն է լինելու, և մտածում են տօնելու բաւ արժանոյն այդ յոբելեանը: Նոյնը կարելի է ասել մեծարգոյ Տիկին Սաթենիկ Ճըմըշկեանի 35 ամեայ յոբելեանի առթիւ. կամ տեսնենք թէ ինչպէս կը վարձատրեն տաղանդաւոր կոմիկ պ. Տէր Դաւթեանին՝ նորա 25 ամեայ յոբելեանի առիթով, որ կարծեմ այս տարի է: Qui vivra—verra !.

Բայց կարելի՞ է միթէ այդ բոլորը պահանջել մի հասարակութիւնից, որի մամուլի հինաւուրց ներկայացուցիչը կուսակցական կրքերից կուրացած միայն իրան շահերն առաջ տանելու համար գրում է լոկ «պ. Սունդուկեան». մինչդեռ առաջ գրում էր՝ «մեր հանճարեղ դրամատուրգ Գ. Սունդուկեան». մի թերթ, որ առաջ գրում էր. «Պէպօն կլասիկական գրուածք է և երբէք չէ հնանալ», իսկ այժմս գրում է՝ «խաղացնի հնացած Պէպօն»: O, tempora, o, mores !.

Գալով «ապահով ռոճկին», որ ինձ առաջարկեց ընկերութիւնը, ես չէի կարող ընդունել, որովհետև համոզուած էի որ ոչինչ չի դուրս գայ այդ ապահով ռոճկից, և այժմ հիմնուելով ընկերութեան նամակի վրայ հարցնում եմ «որտեղից պէտք է վճարէին — եթէ երկու ամիս մի կոպէկ չեն աշխատել»:

Բայց ընթերցողի համար այդ նամակում մի փոքր հետաքրքրական «կէտ» կայ: Ընկերութիւնը գրում է որ ես պատասխանել եմ նոցա առաջարկին՝ «քիչ» է: Ես ընկերութեան նամակին չեմ պատասխանել պաշտօնապէս, այլ մասնաւոր նամակ եմ գրել պ. Սարգարեանին, որին շատ պատճառներ բերելուց յետոյ, գուցէ և գրել եմ ռոճկի սակաւութեան մասին. բայց արդեօք ազնուութի՞ւն է միմիայն այդ խօսքը հանել մասնաւոր նամակից և տպել. ինչո՞ւ պ. Սարգարեանը ամբողջ նամակս չէ տպել: Իմ բոլոր ընկերներս, նոյնպէս նախագահ պ. Աբէլեանը, քարտուղար Աւետեանը և ամենքն էլ լաւ գիտեն, որ ես հայոց բեմից հեռացել եմ ոչ թէ միմիայն ռոճկի համար (թէպէտ խոստովանում եմ անկեղծ որ դա էլ պատճառներից մէկն էր), այլ տասնեակ ուրիշ պատճառներից, որ չեմ ուզում յիշել: Դորանով երևի ընկերութիւնը (կամ նորա ղեկավարը) ուզում է իմ վարկս վայր ձգել հայ հասարակութեան առաջ: Բայց, աւա՛ղ, զուր աշխատանք. հայ հասարակութիւնը չէ հետաքրքրվում դերասաններով, և երկրորդ՝ ես ազատ մարդ եմ՝ միշտ կարող եմ լինել, ուր կամիմ: Բացի դրանից միքանի մարդիկ լաւ ճանաչում են ինձ, և Դուք, պ. խմբագիր, առաջինն էիք, որ բեմ դուրս բերիք, թարգմանելով ինձ համար Դիւմայի «Տիկին Օբրէի գաղափարները», և լաւ գիտէք որ եթէ ես ցանկանայի, կարող էի աւելի ապահով (ոչ լաւ) ապագայ ստեղծել ինձ համար բէլական դպրոցն աւարտելուց յետոյ *):

Այդպէս՝ յարգոյ ընկերներ, մասնաւոր նամակներից քաղուածք անելը լաւ չէ **), այդ ոչինչ չէ աւելացնիլ ձեր ընկերութեան (թէ նորա ղեկավարի) դափնիների վրայ: Sapienti sat!

Վերջացնելով նամակս դարձեալ կասեմ՝ որ հայոց թատրոնի գործը միշտ այդպէս կերթայ, քանի որ նա չունի սեպհական թատրոն, կամ մի դահլիճ միմիայն հայոց ներկայացումների համար, քանի որ նա չի ունենալ մի դրամագլուխ գործի համար, քանի որ նրա ղեկավարները չեն լինիլ գործը հասկացող մարդիկ և ոչ թէ դերասաններ, և մինչև որ ամենայն դերասան միմիայն դերասան չի լինիլ: Եւ այդ բոլորը կարող է դիւրութեամբ իրագործուել, եթէ ինքնաճանաչութիւն ասած բանը լինի մի քանի թիֆլիզեցի և բաքուեցի եռանդուն գործիչների մէջ և շատ գրելու տեղ գործեն սուսափուս: Չեմ կարծում, որ փողի հարց լինի մէջտեղ, երբ տեսնեն գործը բարեխիղճ մարդկանց ձեռքին: Կուսակցութիւնն էլ պէտք է հեռացնել թատրոնից:

Գ. Պետրոսեան:

17 նոյեմբ. 1895 թ.
Մոսկվա:

*) Ուրեմն միմիայն սէրն է պահել ինձ մինչև օրս թատրոնում:
**) Եւ դուք դեռ ուզում էք մասնաւոր նամակը ցոյց տալ ցանկացողներին: Մեծ ջէնտլմէնութիւն է... կեցցէք:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵԼԵՒՄՈՒՏԸ

Արևելեան պատերազմը յառաջ բերող եղելութեանց միջոցին սուլթան Ազիզը իր Ըլդըզի հիասքանչ քէօշկին մէջ մատուցեալ յարատև բաժակներ կը կոնծէր, երբ մեծ-վէզիր Տամատ Մահմուդ փաշան եկաւ յայտնել, թէ այն օրը զինքը շնորհաւորած է ռուսական դեսպան պ. Իգնաթիևը, գովելով փաշային այն ճարտար տնօրէնութիւնը, որով կը դադրեցնէր օսմանեան պետական պարտամուրհակներու վճարումը:

Եւ իրաւցընէ Իգնաթիևին ինչ շահ ունէր այդ տոկոսների վճարման մէջ, քանի որ օսմ. պարտաթղթերը չէին դրուած ռուսական և ոչ մի պանքի կամ ժողովրդի գրպաններու մէջ:

Իսկ եւրոպեան միւս մեծ տէրութեանց համար այդ տնօրէնութիւն խիստ տարբեր և ծանր հանգամանք մ'ունէր, վասնզի Լոնդոնի, Փարիզի, Հռոմի, Պերլինի և Վիեննայի դրամատուններն այդ կերպով մի քանի միլիառ ֆրանք կը կորսնցնէին՝ իրենց ամբարած օսմ. պարտաթղթերուն սոսկալի անկումով:

Ահա թէ ինչու, երբ դադրեցաւ 1878-ի պատերազմի ծուխն ու մուխը, նոյն հինգ մեծ պետութիւնք ձեռք առին իրենց հպատակաց նիւթական շահերի պաշտպանութեան խնդիրը, և միահամուռ գործելով յաջողեցան Տաճկաստանի ելմտական իսկական վարչութիւնն ուղղակի յանձնել իրենց հպատակ պահանջատէրերին:

Այսպէս, կազմուեցաւ Պոլիս «Օսմանեան հանրային պարտուց վարչութիւն» անուամբ մի կատարեալ եւրոպական վարչութիւն, որոյ հինգ անդամներն ընտրուած են հինգ ազգաց պահանջատէրների կողմանէ, և իւրաքանչիւր երկու տարին մի անգամ կը փոխեն: Օսմ. կառավարութիւնն ևս իր կողմանէ մի քոմիսէր նշանակած է:

Սոյն վարչութիւն ուղղակի ինք կը գանձէ Օսմ. պետութեան վեց անուղղակի տուրքերը, որք են՝ 1) ծխախոտի տուրք, 2) ոչխարաց տուրք, 3) ըմպելեաց տուրք, 4) աղի տուրք, 5) ծովային արտադրութեանց տուրք և 6) դրոշմի տուրք: Այս ամեն տուրք վերաբերեալ ամեն կարգադրութիւն, տնօրէնութիւն, միջոցներ ինք կ'որոշէ ու կը գործադրէ՝ ստանալով միայն Օսմ. պետութեան հաւանութիւնը, որ չի զլացուիր երբեք:

Նմանապէս նոյն վարչութիւնն ինք կը վճարէ Օսմանեան հանրային պարտուց տոկոսները, գանձուած հասոյթներու համեմատութեամբ և ինք կը վճարէ նաև Օսմ. արևելեան երկաթուղւոյ բաժնետոմսերի վիճակարկութեամբ շահած պարգևները, փոխանակ 100-ի առայժմ միայն 58% հատուցանելով: Այս պարտուց մասին ևս ամեն տնօրէնութիւն կընէ, որոցմէ թէ Օսմ. պետական գանձը և թէ եւրոպացի պահանջատէրք հաւասարապէս կ'օգտուին:

Այս հակիրճ տեղեկութիւններէ վերջ, ընթերցողն ի հարկէ ինքնին կ'ըմբռնէ այն մեծ ու կարևոր դերը, զոր ունի սոյն եւրոպական վարչութիւնը, իր ափին մէջ ունենալով բովանդակ երկրին ելմտական և տնտեսական կշիռն, որ ուրիշ ոևէ պետութեան մէջ, նոյն իսկ Յունաստանի մէջ, թոյլ չտրուիր օտարին յանձնել:

Յիշենք որ այդ վարչութեան պաշտօնը կը դադրի միայն այն պարագային, երբ Օսմ. տէրութիւնը պատերազմի բռնուի եւրոպեան մի ուրիշ պետութեան հետ:

Այդ պատճառաւ պատերազմի հաւանականութիւն յառաջ բերող քաղաքական պարագաները կազդեն նաև Օսմ. արժեթղթոց կուրսին վրայ, որով սեպտեմբերին 138 ֆրանք արժող արևելեան երկաթուղւոյ բաժնետոմսն այժմ 93 ֆ. արժէ, այն ալ անուանապէս. տարբերութիւնը ահագին է, և Յունաստանէ զատ, ուրիշ ոչ մէկ երկրի մէջ տեսնուած:

Այժմ Կ. Պոլիս մտնող օտարականը, շոգենաւուն վրայէն, հեռուէն կը տեսնէ Ստամպոլի կողմը, Դռան գլխուն, Անա-Սօֆիայի բարձրութեան հետ մրցող, արաբական ոճիւով մի հսկայ և փառաւոր շինութիւն, որոյ մէկ ու կէս միլիոն ռ. ծախք եղած է, թէև ի սկզբան կառավարութիւնը միմիայն կէս միլիոնի արտօնութիւն տուած էր: Այդ շէնքը Օսմ. հանրային պարտուց վարչութեան պաշտօնատունն է, և դէմ առ դէմ Օսմ. պանքի Ղալաթիոյ ոչ նուազ հոյակապ շէնքին, ցոյց կը տայ, թէ եւրոպացիք ինչ դեր ունին Օսմանեան ելմտից մէջ, մանաւանդ վերջին ժամանակներս, երբ Օսմ. պանքան գրեթէ իւրացուց Տաճկաստանի ամեն հանրային ձեռնարկները, որոց պատճառաւ այժմ ինք կը հառաչէ անհուն վնասներու ազդեցութեան և ցաւոց տակ:

Պօսֆօր:

ԲՈՒԼՂԱՐԻԱՆ ԵՒ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏԱԳՆԱՊԸ

Յունաստանից յետոյ Բալքանեան պետութիւններից Բուլղարիան է աչք դրել Թիւրքիայի վրայ: Պաշտօնական «Պրոգրէս» լրագիրը գրում է.

«Յամենայն դէպս Բուլղարիան պէտք է պատրաստ լինի: Ռուսիան մտադիր չէ գործերին միջամտել, բայց եթէ Թիւրքիայի ճգնաժամը շարունակուի և աւելի բարդուի, այն ժամանակ նա՝ թերևս ստիպուած լինի ակամայ միջամտելու միայն այն պատճառով, որ միւս պետութիւններից յետ չմնայ: Այս կերպով կարող է Թիւրքիայի ապագայ գոյութեան խնդիրը բարձրանալ: Այս պէտք է ի նկատի ունենանք և չմոռանանք, որ եւրոպական Թիւրքիայի մեծ մասի վրայ մենք իրաւունք ունենք: Թէ դրա համար ինչ միջոցներ պիտի ձեռնարկել և ում հետ դաշնակից լինել, դրանք խնդիրներ են, որոնք կարող են վճռուել միայն այն ժամանակ, երբ պէտք կլինի խօսքից գործի անցնել: Բայց ամենից առաջ մենք պէտք է ուժեղ լինենք, որովհետև բանակով ոչ որ դաշնակցութեան մէջ չի մտնում: Թող կառավարութիւնն ու ազգը այս հանգամանքներն աչքաթող չանեն»:

ՅՈՒՆԱՍՏԱՆ.—Աթէնքից նոյ. 26-ին «Daily News»-ին հեռագրում է Reiter'-ի գործակալութիւնը. «Համալսարանի 300 ուսանողներ մի միթինգ անելով կազմեցին մի յանձնախումբ հանդանակութիւն բանալու և օգնելու Մակեդոնական դատին այն պարագային, երբ Մակեդոնիայում ծագեն ո և է դէպքեր: Միթինգում արդէն ստորագրուեցան երկու հազար դրամ»:

ԻՏԱԼԻԱ.—Պատգամաւորների պալատում Կրիսպին ասեց. «Երբէք եւրոպական դաշնակցութիւնն այնպէս սերտ կապերով կապուած չի եղել, ինչպէս այժմ: Իտալիան միւս պետութիւնների հետ միասին է գործում Արևելքում»:

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Նոյեմբերի 25-ից.

ԼՈՆԴՈՆ.—«Daily News»-ը հաղորդում է, թէ, երկրորդ պահականաւերի հարցը պետութիւնները լաւ առիթ են համարում գործով փորձելու իրանց ազդեցութիւնը: Պետութիւնները համերաշխ են գործում և ամենքն էլ հաստատապէս վճռած են գործը մինչև վերջը հասցնել: Ոչ պաշտօնական կերպով տեղեկացրած է սուլթանին, թէ շատ հաւանական է որ բանի անցնեն Դարդանէլը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Նոյեմբերի 24-ից.

Վեքսէլի կուրս 3 ամսով:

Լոնդոնի վրայ 10 ֆ. ստ. . . 93, 15
Բերլինի վրայ 100 մարկ . . 45,325
Փարիզի վրայ 100 ֆր. . . . 36,875
Նոր կարած պօլուիմպերիալներ . . . . . 7,40 գն. 7,40 վաճ.
Բօրսայի զեղջը 6½-ից 7½%
4% Պետական արժեթղթ. 98½
5% ներք. արժեթ. 1894 թ. 160

5% Առաջին ներքին փոխ. խաղատոմս 1864 թ. . . 289
5% Երկր. ներքին փոխառ. խաղատոմս 1866 թ . . 239½
5% Ազնուակ. հող. բանկի գրաւական. խաղատոմս 210
5% Պետական երկաթուղու արժեթղթ 101
4% Ներքին փոխ. I սեր. 97½
" " " II " 97½
" " " III " 97½
" " " IV " 97½
4½% փոխ. 1893 թուի. 100⅛
» փոխ. 1 հրատարակ. 100½
» փոխ. 2 հրատարակ. 100½
4½% Գիւղակ. արժեթղթ. ազն. հողային բանկի. 100
4½% Գիւղական հողային բանկի վկայաթղթեր. . 100
5% Ս. Պետ. քաղ. վ. բնկ. 100½
„ Մոսկուայի 100
5½% Օդեսայի 98
5% Թիֆլիզի 98
5% Գիւղակ. արժեթ. հող. բանկերի Խարկովի . . 100
„ Պոլտավայի 99¾
„ Տուլայի 99
„ Կիևի 99¾
„ Մոսկուայի 100⅜
„ Բեսսարաբիայի . . . 99
„ Ներքին Սամարայի . . 100½
„ Դոնսկոյ 99⅛
„ Վիլեննկի 99
6% և 5% Թիֆլիզի . . 101 և 99 գն.
„ Քութայիսի . . 101 և 99½ գն.

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիսի և միզուղական հիւանդութիւնների:
Կ. Մ. ԶԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կին-բժիշկ Ա. Ի. ՍՈՐՕԿԻՆԱ—ՉԵՐԲԻՆԻՆԱ—11—12 ժ. կանանց և ներքին հ.
Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ:
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների ներքին և մորթի հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմի-խուզարկական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ:

Բժշկական ընդունարան
ԲԺՇԿ. ԴՕԿՏՕՐ.
ԱՒԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ
Սոլոլակ, Սերգիևսկի փողոց № 14.

Բացի դեղերից գործադրվում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ԷԼԵԿՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիքական մեթօդներ:

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԴԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ ընդունվում են ամեն օր (բացի կիւրակի և տօն օրերից)

2—3 ժ. ցերեկը { կինարմատների և երեխաների
6-ից երեկոյեան { տղամարդիկ

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկաբարձ-մասաժ անող կին և մասսաժիստ պարոն:

Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.:

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.:

Փոստային գնացքը Թէֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.:

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.:

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.:

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիս հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.:

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիզից Դանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Դանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին:

Ապրանքա-մարդատար գնացքը Դանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտեան 7 ժ. 35 րոպէին:

ՓՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ

Վրաց պատերազմական ճանապարհով.

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղարկվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղարկվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան:

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղարկվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղարկվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան:

ՌՈՒՍԱՑ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ շոգենաւերի երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի և Կ. Պոլսի մէջ:

Բաթումից դուրս է գնում

Շաբաթ օրերը (լոյս կիւրակի գիշերուայ 3 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները:

Կիրակի օրերը, 12 ժամին, ուղիղ ընթացքով՝ Նովօրոսիյսկի, Կերչի, Թէոդոսիայի, Եալտայի, Սևաստապոլի և Եւպատորիայի վրայով:

Երեքշաբթի օրերը (լոյս չորեքշաբթի գիշերուայ 2 ժամին), ապրանքա-մարդատար շոգենաւը բոլոր նաւահանգիստները:

Չորեքշաբթի օրերը (լոյս հինգշաբթի գիշերուայ 3 ժամին) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները:

Օդեսայից գալիս է Բաթում

Երկուշաբթի օրերը—առաւօտեան, ուղիղ ընթացքով:

Չորեքշաբթի և ուրբաթ օրերը—երեկոյեան, շրջանառու ընթացքով:

Երեքշաբթի օրերը—գիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարդատար շոգենաւը, շրջանառու ընթացքով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յայտնում եմ որ արդէն թարգմանւում են հետևեալ գրքերը.
1. Гнѣдко Ахшарумовой.
2. Юля и Аня } Роговой
3. Гриша
1—1

Երդուեալ հաւատար. օգնական
ՍԻՄԷՕՆ ՕՐԴՈՒԽԱՆԵԱՆՑԸ
բնակվում է Սոլոլակում, Փրէյլինսկայա, № 6: (3—2)

Երդուեալ հաւատարմ.
ՎԱՐԴԱՆ ԵՂԻԱԶԱՐԵԱՆԸ
բնակվում է Սոլոլակում, Կոնսուլսկի փողոցում, Բուդաղեանի տանը: (5—5)

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ
ԱԼԷՔՍԱՆԴՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՄԱՑՍՈՒՐԵԱՆՑԻ
Տեղափոխուած է Բարոնսկայա փողոց, Կոլուբանսկու տունը՝ պահականոցի մօտ: (15—12)

ՕԺԻՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՂՋԿԵՐԱՆՑ ՀԱՄԱՐ
ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆ Է 23,000,000 ՌՈՒԲԼԻ
Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետակ. բանկում:

Ծնողներին, խնամատարներին և առ հասարակ այն անձանց, որոնք ցանկանում են ապահովացնել աղջկանց ապագան, «ՌՈՍՍԻԱ» ընկերութիւնը առաջարկում է օժիտի (բաժինք) ապահովագրութիւնը:

Օրինակ, եթէ ցանկանում են երկու ամեայ աղջկայ համար ապահովացնել 5000 ռուբլի օժիտ, այնպէս որ, 18 տարեկան ժամանակին ստանան այդ գումարը (այսինքն 16 տարուց յետոյ), այն ժամանակ այդ տեսակ ապահովագրութեան համար ապահովագրողը «ՌՈՍՍԻԱ» ընկերութեանը պիտի վճարի ամեն 3 ամսից յետոյ 52 ռուբլի:

Սոյնանման ապահովագրութիւններ կարելի է կայացնել նաև այն պայմանով, որ ապահովագրողին անմիջապէս վերադարձուին բոլոր իր վճարած տուրքերը (պրեմիաները), եթէ միայն ապահովագրուած երեխան վախճանուի պայմանաւորեալ ժամանակից առաջ:

1895 թուի յունվարի 1-ին «ՌՈՍՍԻԱ» ընկերութեան մէջ ապահովագրուած էին 31,701 անձինք 83,708,760 ռուբլի դրամագլխով:

Տղայ երեխաների համար ևս կարելի է ապահովացնել դրամագլուխ նոյն կերպով, ինչպէս աղջկանց, և այդ դրամագլուխը կը ստացուի իբրև թոշակ (պէնսիա) կրթութիւնը շարունակելու համար, եթէ միայն ապահովագրուած երեխան կապրի մինչ պայմանաւորեալ ժամանակամիջոցը:

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան Վարչութեան մէջ, որ գտնւում է՝
ԹԻՖԼԻԶՈՒՄ, Սերգիեվսկայա փ. տ. № 6. (երկրորդ յարկում) և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում:
52—38

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ հոգաբարձութեան խորհրդարանում նոյեմբերի 29-ին 1885 ամի, երեկոյեան 8 ժամին կը լինի աճրդախօսութիւն, կապալով տալու չորս տարի ժամանակաւ, 1-ն յունվարի 1896 ամի հետևեալ կալուածոց.—1) Սաղաւմը, քաղաքիս VIII մասում հանդիպեալ Օրօյեանցի նուիրած կալուածքը (այժմ պանդոկ —трактиръ съ постоялымъ дворомъ), որից այժմ ստացվում է կապալավարձ 631 ռ. տարին, 2) Թէլէթ ուխտատեղի կրպակը, որից այժմս ստացվում է կապալավարձ 216 ռ. տարին: Պայմանաթղթերը կարելի է տեսնել հոգաբարձական գրասենատան մէջ ամենայն օր՝ բացի կիւրակի և տօն օրերից, ցերեկուայ 10—2 ժամը: (1—1)

„Թ Ա Տ Ր Ո Ն“
ԳՐԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՊԱՏԿ. ՀԱՆԴԷՍ
Ներկայ 1895 թուակ. II-րդ №-ը լոյս կը տեսնէ մինչև առաջիկայ դեկտեմբ. 15-ը:

Բովանդակութիւն՝ «Բաղդասար աղբար» կոմ. 3 գործ. Պարոնեանի, «Հասարակութեան նեցուկները» դր. 4 գործ. Իբսէնի, «Դօն-Ժուան» Պուշկինի, Մոցարտի մանկութիւնը մանկ. պիես 1 գործ. Հայերէն պիէսների լիակատար ցանկը, և մի շարք այլ յօդուածներ:

Հրատարակիչ՝ ԱՂԷՔՍԱՆԴՐ ԹԱՐԽԱՆԵԱՆ
Հասցէն՝ Тифлисъ. Александру Тарханьянъ, կամ Tiflis, A. Tarkhanian.
«Թատրոն»-ի առանձին № №-ը բացառապէս վաճառվում են «Կենդրոնական գրավաճառանոցում», իւրաքանչիւր №-ը 2 ռուբլի: